ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ

ԱՖՍԱՆԵՀ ՇԻՐԱՆԻ ՖԱՐԱԴՈՆԲԵՀ (ԻԻՀ, Ք. ՍՊԱՀԱՆ)

Ավելի քան երկու տասնամյակ՝ ՀՀ անկախությունից առ այսօր, ՀՀ և ԹՀ երկու սահմանակից երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ չեն հաստատվել, և ցամաքային սահմանները դեռ փակ են երկու երկրների համար: Իրականում հայ-թուրքական հակամարտությունը բարդ է, բազմաշերտ՝ շահագրգիռ զանազան կողմերով և տարբեր հարթություններում. անցնելով տարածաշրջանային մակարդակը՝ այն ստացել է նաև միջազգային հարթակի ռազմավարական նշանակություն. և տարածաշրջանային ու միջազգային տերությունների քաղաքական միտումների ազդեցության ոլորտում է, և շահերի բախման կետ:

ՀՀ անկախության սկզբնական շրջանում ԹՀ-ն ճանաչեց ՀՀ անկախությունը, սակայն դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար որպես նախապայման՝ անհրաժեշտ է համարել ՀՀ-ն ճանաչել ներկա սահմաններով՝ նկատի առնելով իր՝ թուրքական և ադրբեջանական սահմանները, այսինքն՝ հավատարիմ մնալ 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի և 1921թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերին: Համաձայն վերոհիշյալ պայմանագրերի, ճանաչվում է Թուրքիայի իրավասությունը այն տարածքների վրա, որ Հայաստանը անվանում է Արևմտյան Հայաստան: Ըստ այդ պայմանագրերի՝ Կարսի տարածքը Ռուսաստանից անցնում էր Թուրքիային: Սակայն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման սկզբնական շրջանից ի վեր Հայաստանը հրաժարվել է՝ պնդելով առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու իր մոտեցումը:

Թուրքիայի կողմից շրջափակման պատճառով աշխարհի հետ ՀՀ առևտրատնտեսական հարաբերությունները ներկայումս իրականացվում են Իրանի, Վրաստանի և Ռուսաստանի միջոցով: ՀՀ-ի և ԹՀ-ի միջև դիվանագիտական ու տնտեսական պայմանագրերի բացակայության պայմաններում առևտուրը կատարվում է Իրանի և Վրաստանի տարածքներով: Երկու երկրների միջև առկա է Երևան-Ստամբուլ-Անթալիա օդային կապը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների կարգավորումը պայմանավորված է մի քանի գործոններով: Դրանք են.

- 1915 թ. ցեղասպանությունը. Հայաստանը ձգտում է հասնել նրա միջազգային ճանաչմանը

- Թուրքիայի հետ Հայաստանի տարածքային խնդիրները

- Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը և, բնականաբար, դրա կարևոր դերը հարաբերությունների հաստատման ասպարեզում:

Նկատենք, որ միջպետական և էթնոքաղաքական հակամարտությունները դասվում են քաղաքական կոնֆլիկտների շարքին: XX դարասկզբի հայ-թուրքական կոնֆլիկտը, պատմականորեն սկիզբ առնելով էթնիկական հակամարտության հողի վրա, այսօր ՀՀ-ի և ԹՀ-ի միջև էթնոքաղաքական միջպետական կոնֆլիկտի կարգավիճակ է ստացել: Ակնհայտ է, որ պատմականորեն ձևավորված ատելությունը էթնոքաղաքական կոնֆլիկտի պատճառ է դառնում: Վերլուծաբանները կովկասյան հակամարտությունները դասակարգում են որպես էթնոքաղաքական հակամարտություններ: Ի դեպ, այս էթնոքաղաքական հակամարտություններում կրոնը հաճախ հանդես է գալիս որպես գործոն, որն առանձնացնում է երկու հասարակությունները: Իրականում քաղաքականացված է ազգային պատկանելությունը, ոչ թե կրոնը:

Հայ-թուրքական կոնֆլիկտի հիմնական դրդապատճառները և պատճառահետևանքային գործոնները. *տարածքային՝ Արևմտյան Հայաստանի վերաբերյալ ԹՀ-ի մտահոգության խնդիրը:*

ՀՀ-ն իր անկախությունից հետո հաշտվողական քաղաքականություն է վարում ԹՀ-ի հետ և Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում ողջունել է Թուրքիայի միջնորդական գործունեությունը: Լևոն Տեր-Պետրոսյանի կառավարությունը, որը Թուրքիայի նկատմամբ վարում էր համեմատաբար բարի դրացիական քաղաքականություն, ձեռնպահ էր մնում բարձրացնելու Արև-մըտյան Հայաստանի խնդիրը[1]: Սակայն Հայաստանում Ռոբերտ Քոչարյանի նախագահության օրոք արտաքին քաղաքականության մեջ առաջ քաշվեց Հայ դատը: ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը հայտարարեց, որ Երևանը «ցեղասպանության ճանաչումը» դնում է օրակարգում՝ Թուրքիայի հետ ապագա բանակցություններ սկսելու համար[2]:

Դա նշանակում է՝ հայերի իրավունքի համար տեսական ճանաչում ձեռք բերել այն տարածքներում, որտեղ վերջիններս հիմնականում ապրել են մինչև 1915 թ.:

Հայոց ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը մեծապես պայմանավորված է տարածքային հարցով, որն ամենայն հավանականությամբ՝ կհանգեցնի այն ընկալմանը, թե Թուրքիան ընդունում է Հայաստանի իրավունքը Արևմտյան Հայաստանի տարածքների նկատմամբ[3]: Դա լուրջ մտահոգության տեղիք է տալիս թուրքական պետության ղեկավարությանը:

---

[1] **Svante E.** Cornell, Small Nations and Great Powers, A Study of Ethnopolitical Conflict in the Caucasus, p. 292.

[2] Jamestown Monitor, 22. April. 1998.

[3] **Svante E. Cornell,** *նշվ. աշխ.,* p. 292.

ԼՂ-ի հակամարտությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում ԼՂ-ի հակամարտության հարցը որպես նախապայման առաջ է քաշվել Թուրքիայի կողմից և նկատի ունենալով այս երկու հակամարտությունների կարևոր փոխկապակցվածությունը՝ կարելի է եզրակացնել, որ հայ-թուրքական հակամարտությունը կարգավորելով որպես առաջնահերթ քայլ՝ ԼՂ-ի հակամարտությունը հնարավոր է ավելի արագ լուծել: Դա ուշադրության արժանի հանգամանք է Մինսկի խմբի գործունեության արդյունավետության համար:

Եթե մինչև 2000թ. հայ-թուրքական հարաբերություններում ա-ռաջնային բնույթ էր կրում ԼՂ-ի հիմնահարցի կարգավորումը, ապա 2000թ. ի վեր՝ Հայոց ցեղասպանության միջազգային հարցը: Իրականում ՀՀ-ի և ԹՀ-ի հարաբերությունների կարգավորման ասպարեզում, մեծ հավանականությամբ, նախ պետք է լուծվի հայոց ցեղասպանության հիմնախնդիրը[4]:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման առաջին և երկրորդ մակարդակների դիվանագիտության գործունեությունը:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ ուշադրության արժանի փորձեր են կատարվել հասարակական և ժողովրդական շրջանակներում, որոնք հայտնի են որպես երկրորդ մակարդակի դիվանագիտություն:

Նշենք, որ առաջին մակարդակի դիվանագիտությանը, այն է՝ պաշտոնական միջկառավարական դիվանագիտությանը զուգահեռ ուշադրության արժանի գործունեություն է ծավալվել երկրոդ մակարդակի դիվանագիտության /Trak two Diplomacy/ ոչ պաշտոնական միջամտության և ոչ պետական դերակատարների ասպարեզում: Հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում կողմերի միջև դրսևորվում են հասարակական և առևտրատնտեսական համագործակցության որոշ նախաձեռնություններ՝ նպատակ հետապնդելով տնտեսական հարաբերությունների ընձեռած հնարավորություններով կարգավորել քաղաքական հարաբերությունները՝ փորձելով հաղթահարել նաև երկու ժողովուրդների հոգեբանական արգելքները:

Հատկանշական է, որ 1997թ. մայիսի 3-ին ձևավորվում է թուրք-հայկական գործարարության զարգացման կոմիտեն /ԹՀԳԶԿ/[5], որն աշխատանքներ է տանում նաև մշակութային և գիտական համագործակցությունների

---

[4] *Այս կապակցությամբ տե՛ս նաև* **Grigoryan A.,** *Nagorno-Karabakh and Turkish-Armenian Relations: Which Should be Solved First?, Available at: http:// caucasusedition.net/analysis/nagorno-karabakh-and-turkish-armenian-relations-which-should-be-solved-first/*

[5] *Turkish – Armenian Business Development Council (TABDC). http:// www. tabdc.org/*

ոլորտում, փորձում կազմակերպել թուրք-հայկական պատմաբանների համաժողով:

Հայ-թուրքական երկրորդ մակարդակի բազմակողմանի ոչ-պաշտոնական հարաբերությունների մասին մանրամասն ուսումնասիրություն է կատարվել ազգությամբ թուրք մասնագետների կողմից[6]: Համաձայն նրանց վերլուծությունների՝ 1996-2010թթ. հայ-թուրքական ոչ-պաշտոնական մակարդակի սոցիալ-մշակութային հարաբերությունները և հարաբերությունների տեսակը ամփոփվում են գծապատկերում (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1

---

[6] **Burcu Yeşiladalı,** *Second Track (Unofficial) Diplomacy Efforts to Mitigate Conflicts between Turks and Greeks, and Turks and Armenians, 2nd Istanbul Conference on Democracy and Global Security, Human Rights Law Research Center, Istanbul Bilgi University. Available at: https:// www. academia.edu/ 2358050/ Second_Track_ Unofficial_Diplomacy_Efforts_to_Mitigate_Conflicts_between_Turks_and_Greeks_ and_Turks_and_Armenians - Esra Çuhadar, Burcu Gültekin Punsmann, Reflecting on the Two Decades of Bridging the Divide: Taking Stock of Turkish-Armenian Civil Society Activities, tepav, 2012, p. 23.*

Այս՝ երկրորդ մակարդակի բազմակողմանի գործողությունների ոլորտում առանձնացվում են հետևյալ ամենատարածված՝ չորս հիմնական նախաձեռնությունները. ինտերակտիվ սեմինարներ և համատեղ աշխատանքային խմբեր, փոխանակման ծրագրեր և երկխոսության խմբեր, մշակութային ծրագրեր, ինչպես նաև ուսումնական սեմինարներ ու կոնֆերանսներ: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ընթացքում առաջին և երկրորդ մակարդակի դիվանագիտության առնչության մասին պետք է նշել, որ Հայաստանում երկրորդ մակարդակի դիվանագիտության ասպարեզում ավելի շատ ջանքեր են գործադրվել՝ առաջին մակարդակի դիվանագիտության վրա ազդեցություն թողնելու միտումով: Սակայն Թուրքիայում երկրորդ մակարդակի դիվանագիտության դերակատարները եղել են ոչ այնքան գործունյա:

Հայ-թուրքական հակամարտությունը և կարգավորման ուղիները: *Միջազգային հակամարտությունների բնույթից ելնելով՝ կարգավորման գործընթացը ծավալվում է շատ երկար ժամանակահատվածում: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ընթացքը որոշ ելևէջներից հետո՝ 2009թ. ցյուրիխյան գործընթացի անավարտ մնալու հետևանքով իրագործման փուլից հետ է մղվել՝ վերադառնալով բանակցային փուլ, այն է՝ կողմերի հիմնական դիրքորոշումների և հակասությունների քննարկման շրջան: Յուրա-քանչյուր հակամարտության կարգավորման գործընթաց ընդգրկում է կայունացման, հաղորդակցման, բանակցային և իրագործման փուլերը: Ներկայումս, քանի որ կողմերից մեկը ինչ-ինչ պատճառներով այլևս պատրաստ չէ բանակցելու, ուստի մյուս կողմը նույնպես ստիպված է լինում վերադառնալ կարգավորման նախաբանակցային և հաղորդակցման փուլ: Անշուշտ, միջազգային հարաբերությունների ոլորտի բանակցությունների գործընթացը պետք է դիտարկել որպես մի կարևոր գիտակարգ, որը «ներառում է ոչ միայն բուն բանակցությունները՝ հանդիպում-քննարկումները, այլև բոլոր արտաքին գործոններն ու ռազմավարությունները, որոնք ազդեցություն ունեն բանակցությունների վրա»[7]: Հաշվի առնելով վերջին զարգացումները Հայաստանի և Թուրքիայի միջև և Թուրքիայի կատարված քայլերը՝ մոտ ապագայում հազիվ թե հարաբերությունների էական բարելավում լինի:*

Հակամարտությունների կանխարգելման և դրանց դեմ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը, հատկապես միջազգային հարաբերությունների ռազմավարական ասպարեզում պահանջում է գիտական որոշակի մոտեցում և մասնագիտական յուրահատուկ գիտակարգի մշակում: Հակամարտության վերլուծությունը, լուծումը և կարգավորումը յուրաքանչյուր կոնֆլիկտի գիտական վերլուծության հիմնական առանցքներ

---

[7] **Մելքոնյան Ա.,** *Կոնֆլիկտ: Կոնֆլիկտների կարգավորում, 2010* (http://old.asparez.am/aboutus/projects/jca-arm-az-uk-fco-2010-2011/10.armen-melqonyan-conflict-regulation-management.pdf):

են կազմում: Համաձայն կոնֆլիկտաբանների, հակամարտությունները, ըստ նրանցում դրսևորվող բռնության աճի, բաժանվում են չորս տիպերի՝ հակամարտություն չկա, թաքնված հակամարտություն, մակերեսային հակամարտություն և բացահայտ հակամարտություն: Հայ-թուրքական հիմնախնդրում առկա է մակերեսային կոնֆլիկտը՝ խորը արմատներով, որն առավել բարդ իրավիճակ է ստեղծել: Եթե մակերեսային կոնֆլիկտի դեպքում հակամարտությունը կարող է վերանալ հաղորդակցությունների կարգավորման հետ մեկտեղ, ապա հայ-թուրքական բացահայտ հակամարտության պարագայում այդպես չէ:

Կոնֆլիկտային վերոհիշյալ իրավիճակներից յուրաքանչյուրը պահանջում է միջամտության որոշակի մոտեցումների կիրառություն[8]: Միջամտության հիմնական ձևերն են՝ կոնֆլիկտի կանխարգելումը, կարգավորումը, կառավարումը, լուծումը ***և*** *փոխակերպումը (տրանսֆորմացիան): Ըստ այդմ, հայ-թուրքական բացահայտ հակամարտության համար կիրառվում է կոնֆլիկտի կարգավորման միջամտության ձևը, որի նպատակն է կողմերին բերել որոշակի համաձայնության, ինչը մասամբ կբավարարի նրանց շահերն ու պահանջները: Պետք է նկատել, որ հայ-թուրքական հակամարտու-թյան հարցում չի կիրառվում կոնֆլիկտի կառավարման միջամտության ձևը, որն ուղղված է կողմերի վարքագծի փոփոխությամբ գտնելու այնպիսի բանաձև, որի միջոցով հակամարտությունն ընթանա ցանկալի հունով: Համաձայն որոշ վարկածների, հայ-թուրքական՝ խորը արմատավորված հակամարտությունը պահանջում է կոնֆլիկտի լուծման միջամտության ձևը, որը կբավարարի կողմերի շահերն ու նպատակները և կապահովի հակամարտության ավարտը՝ երկարաժամկետ հեռանկարով: Չնայած կողմերի որոշ դրական մոտեցումներին, ինչպես նաև միջազգային մասշտաբով թափված ջանքերին, կոնֆլիկտի լուծումը հաջողությամբ չպսակվեց, և աստիճանաբար ծագում է այն գաղափարը, որ այս հակամարտությունը չի կարող վերանալ: Նման իրավիճակներից ելնելով, կարծում ենք՝ առավել նպատակահարմար է դիմել կոնֆլիկտի փոխակերպմանը, որի համաձայն, որոշակի պայմաններում հակամարտությունը կարող է վերափոխվել և տեղի տալ դրական գործառույթներին: Ինչպես նշվեց հայ-թուրքական կոնֆլիկտի պարագայում, առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը հնարավոր է օգտագործել որպես հակամարտության փոխա-կերպման կարևոր գործոններից մեկը: «Կոնֆլիկտի փոխակերպման մոտեցման կողմակիցներ են հատկապես եվրոպական մասնագետները, իսկ կոնֆլիկտի լուծման մոտեցման կողմնակիցները՝ առավել ամերիկյան դպրոցը»[9]: Կոնֆլիկտի փոխակերպումը իրականում բազմակողմանի զարգացող*

---

[8] *Տե՛ս նույն տեղում:*

[9] *Նույն տեղում, էջ 4:*

գործունեությունն է, որը հնարավոր է իրականացնել հիմնախնդրի կառուցվածքի յուրաքանչյուր մակարդակում[10]*:*

ТИПОЛОГИЯ АРМЯНО-ТУРЕЦКОГО КОНФЛИКТА И ВОЗМОЖНЫЕ ПУТИ ЕГО УРЕГУЛИРОВАНИЯ

АФСАНЕ ШИРАНИ ФАРАДОНБЕ (ИРИ, г. ИСФАГАН)

Резюме

Армяно-турецкий конфликт начала XX в., возникший на почве этнического конфликта, на сегодняшний день обрёл статус межгосударственного этнополитического конфликта между РА и ТР. Данный многовековой конфликт требует такого посредничества, при котором будут учтены интересы и цели противоборствующих сторон и который обеспечит решение вопроса в долгосрочной перспективе. Однако невзирая на определ¸нный позитивный подход конфликтующих сторон, конфликт по сей день остается неразрешённым. Исходя из сложившейся ситуации, конфликт целесообразно трансформировать таким образом, чтобы задействовать его в развитии торгово-экономических отношений между РА и ТР в качестве одного из важнейших факторов преобразования рассматриваемого конфликта.

---

[10] *Տնտեսագետները նշում են, որ Թուրքիայի հետ Հայաստանի տնտեսական համագործակցությունը կենսական անհրաժեշտություն է: Ըստ նրանց՝ «...որքան էլ քաղաքական հարաբերությունները այս երկրի հետ (Թուրքիայի) լարված լինեն, վաղ թե ուշ դրանք պետք է մղվեն հետին պլան՝ տնտեսական հարաբերությունների զարգացման ճանապարհով, քանի որ Թուրքիան հանդիսանում է Հայաստանի բնական հարևանը» (***Թորոսյան Թ., Հայրապետյան Գ., Գալոյան Դ., Հովակիմյան Ն., Կոտիկյան Ն., Սարգսյան Լ.,** *Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում, Ե., 2012, էջ 173-174), տե՛ս նաև* **Թորոսյան Թ.,** *Միջազգային տնտեսագիտություն, Ե., 2003, էջ 242,* **Խոջաբեկյան Վ. Ե.,** *Զբաղվածության հակամարտությունները Հայաստանում անցման շրջանում, Ե., 1998, էջ 219:*

THE TYPOLOGY OF THE ARMENIAN-TURKISH CONFLICT AND POSSIBLE WAYS OF ITS REGULATION

AFSANEH SHIRANI FARADONBEH(IRI, ISPAHAN)

Abstract

The Armenian-Turkish collision at the beginning of the XX century that originated from the ethnic conflict has acquired a status of an ethno-political interstate conflict between the Republic of Armenia and the Russian Federation. This century-long conflict requires an intervention that will meet the interests and goals of both parties and provide a long-term resolution.
Despite the positive disposition of the parties to the conflict, as well as the international efforts, the conflict still requires a solution. In this respect, the development of economic relations between two countries can lead to conflict transformation.